



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ Ե՛ ԿԵՂԵՅԻ



ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՈՒՄ

23 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 3

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
 (58.1-14)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-
 «Ուժգին եւ անկաշկանդ պոռա՛, փողի նման ձայնդ բարձրացուր եւ իմ ժողովուրդիս պատմէ իր մեղքերը. Յակոբի սերունդին պատմէ իր անօրէնութիւնները: Ամէն օր զիս կը փնտռեն, կ'ուզեն իմ ճանապարհներս ճանչնալ. կարծես արդարութիւն գործած ժողովուրդ մը ըլլային, կարծես իրենց Աստուծոյն պատուիրաններէն երբեք դուրս ելած չըլլային: Եւ հիմա եկեր արդարութիւն եւ իրաւունք կը փնտռեն քովս, եւ կ'ուզեն Աստուծոյ մօտենալ: Կը հարցնեն.- «Ծոմ բռնեցինք, ինչո՞ւ նկատի չառիր. մենք մեզ նեղեցինք, ինչո՞ւ չլսեցիր մեզ»: Որովհետեւ,- կ'ըսէ Տէրը,- ծոմ բռնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ընէք դարձեալ. ձեր աշխատաւորները կը հարստահարէք, ձեր հակառակութիւններն ու կռիւները կը շարունակէք եւ խեղճերն ու աղքատները կը տանջէք: Այսպիսի ծոմապահութիւն պէտք է՛ ինծի. այսպիսով ձեր ձայնը ինծի չի՛ հասնիր: Միթէ այսպիսի՞ ծոմ ուզեցի. պահանջեցի՞ որ մարդս ինքզինքը չարչրկէ, կամ՝ գլուխը խոնարհեցնէ, ինչպէս եղէզը հովին դիմաց, կամ՝ քուրձի եւ մոխրի վրայ պառկի: Ա՞յս է քու ծոմապահութիւն կոչածդ եւ Տիրոջ համար ընդունելի ծոմապահութեան օրը: Ո՛չ, -կ'ըսէ Տէրը,- ծոմապահութիւնը ա՛յն ատեն միայն իմ ուզածիս պէս կ'ըլլայ, երբ դադրիս անիրաւութիւն գործելէ, դադրիս վաճառքի մէջ խարդախութիւն ընելէ, ազատ թողուս հարստահարուածները եւ անոնց պարտքի անիրաւ մուրհակները պատուես. երբ հացդ անօթիին հետ բաժնես. անտուն աղքատները տունդ ընդունիս, զգեստ տաս անոր որ կը տեսնես թէ մերկ է, եւ ընտանիքդ ու զաւակդ չզրկես: Այն ատեն քու լոյսդ արշալոյսի պէս պիտի բացուի եւ դուն շուտով պիտի բժշկուիս. արդարութիւնդ քեզ պիտի առաջնորդէ եւ Աստուծոյ փառքը ամէն կողմէ քեզ պիտի պաշտպանէ: Այն ատեն երբ

աղօթես՝ Աստուած պիտի լսէ քեզ. հագիւ բերանդ բանաս՝ պիտի հասնի քեզի: Եթէ դադրիս տկարները հարստահարելէ, ուրիշներուն սպառնալէ եւ անոնց մասին զրպարտութիւն ընելէ, եւ փոխարէնը յօժար սիրտով հացդ անօթիին տաս ու կարօտեալները կշտացնես, այն ատեն նոյնիսկ եթէ խաւար ըլլաս՝ պիտի լուսաւորուիս, մթութիւնդ կէսօրուան լոյսի պիտի փոխուի. Աստուած ինք պիտի առաջնորդէ քեզ միշտ, պիտի բաւարարէ բոլոր ցանկութիւններդ, պիտի զօրացնէ ոսկորներդ, եւ դուն ջրարբի պարտէզ ու մշտահոս աղբիւր պիտի դառնաս: Զաւակներդ դարձեալ պիտի շինեն քու քաղաքներդ որոնք երկար ատեն աւերակ մնացած էին. անոնց հիմերը պիտի վերականգնեն անասանելի, եւ սերունդէ սերունդ պիտի բնակին. ու պիտի ճանչցուի որպէս փլատակները նորոգող եւ աւերուած ճամբաները վերաշինող ժողովուրդ: Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարեքները պիտի պարգևեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱՄ ՆԱՄԱԿԷՆ
 (13.11-14.23)

Արոյ այս սկզբունքով ընթացէք, գիտնալով թէ ի՛նչ ժամանակի մէջ կ'պարհնք: Ժամանակն է որ քունէն արթնանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի՛ մօտ է մեզի քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը առնենք՝ ապրելու համար այնպէս ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Քրիստոսի նմանեցէք, եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ կուռքերու զոհուած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող

չարհամարհէ՛ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած գայն ընդունենք է: Ո՞վ ես դուն որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ի՛նք միայն գիտէ՛ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ՛ ինկած: Բայց վստահ եղէք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կընայ գայն կանգուն պահել:

Նոյնպէս, ոմանք կը խորհին թէ գ Աստուած պաշտելու համար այսինչ օրը աւելի յարմար է քան միւս օրը, մինչ ուրիշներու համար բոլոր օրերը նոյնն են: Իւրաքանչիւրը թող իր համոզումը պահէ: Կը բաւէ որ թէ՛ յատուկ օր մը փնտռողը եւ թէ՛ օրերու միջեւ խտրութիւն չգնողը երկուքն ալ Տէրը պատուել կը խորհին: Նոյնպէս ալ, թէ՛ կուռքերու գոհուած միս ուտողը Տէրը կը պատուէ եւ թէ՛ չուտողը, երբ երկուքն ալ Աստուծոյ գոհութիւն կը յայտնեն:

Մեզմէ՛ ոեւէ մէկը ինքն իր անձին համար չ՛ապրիր, ո՛չ ալ ինքն իրեն համար կը մեռնի: Եթէ կ՛ապրինք՝ Տիրոջ համար կ՛ապրինք, եւ եթէ կը մեռնինք՝ Տիրոջ համար կը մեռնինք. որ կը նշանակէ թէ ըլլա՛յ կեանքի եւ ըլլա՛յ մահուան մէջ՝ Տիրոջ կը պատկանինք: Ատոր համար ալ Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի մեր Տէրը ըլլայ թէ՛ կեանքի եւ թէ՛ մահուան մէջ հաւասարպէս: Ինչո՞ւ կը դատես ուրեմն եղբայրդ, կամ ինչո՞ւ գայն կ՛արհամարհես: Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Տես ինձմով կեցողունմ, - կ՛ըսէ Տէրը, - որ ամէն ծուկ պիտի խոնարհի առջեւ եւ ամէն լեզու պիտի խոստովանի թէ ե՛ս եմ Աստուածը»:

Քանի ուրեմն մեզմէ՛ իւրաքանչիւրը իր անձին համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, այսուհետեւ դադրինք զիրար քննադատելէ, եւ փոխարէնը ջանանք մեր եղբայրներուն գայթակղութեան եւ մեղանչումին պատճառ չդառնալ:

Յիսուս Քրիստոսով հետեւեալը ապահովապէս գիտեմ, թէ ինքնին պիղծ բան չկայ: Բան մը պիղծ կ՛ըլլայ ա՛յն մարդուն համար, որ գայն պիղծ կը համարէ: Եթէ գիտես թէ քու ուտելովդ եղբորդ խղճմտանքը կը վիրաւորես, սիրով շարժած չե՛ս ըլլար երբ ուտես: Քու կերակուրովդ պատճառ մի՛ դառնար որ կորսուի եղբայրդ, որուն համար Քրիստոս մեռաւ: Առիթ մի՛ տար որ բարի եւ ուղիղ սեպած բանը հայհոյութեան պատճառ դառնայ: Որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը կերակուր կամ ըմպելիք չէ, այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն, Սուրբ Հոգիէն տրուած: Եւ ով որ ասոնցմով կը ծառայէ Քրիստոսի, անիկա Աստուծոյ հաճելի կ՛ըլլայ եւ մարդոց գովելի:

Արդ, այսուհետեւ խաղաղութիւն փնտռենք եւ աշխատինք իրարու հաւատքը ամրապնդել: Չըլլա՛յ որ կերակուրի պատճառով Աստուծոյ գործը քանդես: Ամէն բան մաքուր է ինքնին. բայց սխալ է բան մը ուտել, երբ ատիկա ուրիշ մը կը գայթակղեցնէ: Աւելի ճիշդ է՝ ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ ուրիշ ոեւէ բան ընել՝ որով եղբայրդ կը գլորի կամ կը գայթակղի կամ կը տկարանայ: Այս մասին քու համոզումը քու եւ Աստուծոյ միջեւ թող մնայ: Երանի՛

անոր որ ինքզինքը դատապարտութեան չ՛ենթարկեր այնպիսի բաներով՝ որով իր ընկերոջ փորձութեան պատճառ կ՛ըլլայ: Միւս կողմէ, եթէ մէկը կասկած ունի իր կերածին անմաքրութեան մասին, Աստուծոյ դատապարտութեան ենթակայ է եթէ ուտէ, որովհետեւ իր արարքը հաւատքի արդիւնք չէ: Եւ ինչ որ հաւատքէն չի գար՝ մեղք է:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՍԻ
(6.1-21)

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ՛ըսէ. - «Զգո՛յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

«Երբ ողորմութիւն կ՛ուզես տալ՝ փող ու թմբուկով մի՛ ընէր, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ՛ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքը թող չգիտնայ թէ ի՛նչ կ՛ընէ աջ ձեռքը: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ՛ըլլաս, եւ քու երկնաւոր Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Նմանապէս, երբ կ՛աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուռը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցանէ յայտնապէս: Տակաւին, երբ կ՛աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը գիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

«Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէք. -

«Հայր մեր երկնաւոր, սրբաբանուի՛ անունդ. թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, գորութիւնը եւ փառքը. ամէն:

«Եթէ մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի չներէ ձեր յանցանքները:

«Երբ ծոմ պահէք, տրտումերես մի՛ ըլլաք կեղծա-
ւորներուն նման, որոնք իրենց երեսը կը կախեն,
որպէսզի մարդոց ցոյց տան թէ ծոմ կը պահեն:
Վստահ եղէք, միայն այդ է իրենց վարձատրութիւնը:
Ընդհակառակը, երբ ծոմ կը պահես, օձէ՛ գլուխդ եւ
լուա՛ երեսդ, որպէսզի մարդիկ չգիտնան թէ ծոմ կը
պահես. եւ Աստուած որ անտեսանելի է, բայց կը տեսնէ
կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

«Զեր հարստութիւնը մի՛ դիզէք երկրի վրայ, ուր
ցեցն ու ժանգը կը կրծեն ու կը փտեցնեն եւ կամ
գողերը տանդ պատը քանդելով ներս կը մտնեն ու
կը գողնան զայն: Այլ ձեր հարստութիւնը երկիրնքի
մէջ դիզեցէք, ուր ցեցն ու ժանգը չեն կրնար կրծել եւ
փտեցնել զայն եւ ոչ ալ գողերը կրնան տանդ պատը
քանդելով ներս մտնել եւ գողնալ: Որովհետեւ ձեր
հարստութիւնը ուր որ է, հոն կ'ըլլայ նաեւ ձեր սիրտը»:

40-ԱՄԵԱԿ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցին

Հ Ա Ն Դ Ի Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Նախագահութեամբ եւ Օրհնութեամբ
Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին
Կազմակերպութեամբ
Հովիւին եւ Հոգաբարձութեան

Բանախօս՝

Գերպ. Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսէկեան

Շաբաթ, 21 Մարտ 2020-ի
երեկոյեան ժամը 19.00-ին
Մոնթրէալի Հայ Կեդրոնի
Աւետիս Ահարոնեան սրահին մէջ

Մուտքը ազատ է,
սակայն կը խնդրուի ներկայութիւնը հաստատել
հեռաձայնելով
եկեղեցւոյ քարտուղարութեան.
514-331-5445 x 202

**Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻԱՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ
ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԼՍԱՐԱՆՆ 2020**

Արեւազալի Ժամերգութիւններ
Ամէն Ուրբաթ առաւօտեան 10.00-10.45

**ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԼՍԱՐԱՆՆ՝
Ա.**

Չորեքշաբթի, 26 Փետրուարի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝
«ՄԱՐԴԸ ԸՍՏ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԿԵՐԻՆ ԵՒ ՆՄԱՆՈՒԹԵԱՆ»,
Կը խօսի Գերայ. Տ. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսայեկեան:
Բ.

Չորեքշաբթի, 4 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ **«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՉ ԶՈՀ»,**
Կը խօսի Գերյ. Տ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան:
Գ.

Չորեքշաբթի, 11 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ **«ՀՈԳԵՒՈՐ ԲՈՒԺՈՒՄ»,**
Կը խօսի Վերապատուելի Յովհաննէս Սվանեան:
Դ.

Չորեքշաբթի, 18 Մարտի երեկոյեան ժամը 6.30-ին՝
ՍԻԶԻՆՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ:
Ե.

Չորեքշաբթի, 25 Մարտի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝
**«ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆՉ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ/ՎԱՍՆ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ»,**
Կը խօսի Բրշ. Թորոս Սրկ. Պապիկեան:
Զ.

Չորեքշաբթի, 1 Ապրիլի երեկոյեան ժամը 7.00-ին՝
Ժամերգութիւն, ապա՝ **«ՏԿԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՉ ԶՕՐՈՒԹԻՒՆ»,**
Կը խօսի Բրշ. Կարօ Սրկ. Նոյսուտեան: